

եւ հինգ¹ ազգք, յորոց փոխնկաւ² մտին պատե-
րազմաւ Գուդք՝ եկեալ ի Սկանդի[իոյ]³ կղզ[ւ]ոյ⁴,
որ կոչի եմիոս Գերմանաց[ւ]ոց⁵, իսկ Սկլաքն ան-
ցին ընդ Դանա[յ]⁶ գետ եւ կալան այլ աշխարհ ի
Թրակիոյ⁷ եւ ի Մակեդոնիոյ⁸, եւ անցին յԱքա-
լիա⁹ եւ ի Դաղմատիա: 57 Բայց յառաջ ի⁸ Թրակ
զաւրավարութիւնք էին այսոքիկ՝ Թանդիդի-
կեանք, Սառդիկեանք⁹, Սիկիլիտեանք եւ այլք:
58 Եւ լերինք՝ երկու¹⁰, եւ՝ գետս. մի է Դանոբ, որ
բաժանի ի վտակս վեց¹¹, եւ առնէ լիճ մի եւ կղզի,
որ կոչի Պիւկի. ի կղզիս այս [12ա] բնակեալ է Աս-
պարհորուկ որդին Խուբրաւթա[յ], որ փախեալ ի
Խազրաց՝ ի Բուլխարաց լեռնէն, եւ գնաց հալա-
ծեաց ի մուտ[ի]ս կոյս¹² զԱւառն ազգ եւ բնակեցաւ
անդ: 59 Սա ունի գերջանիկն Կոստանդնուպաւ-
լիս¹³ ի բերան մտից ծովագետոյն Պոնտոսի, որ
կոչի Թրակական Պոսպորոն¹⁴: 60 Ի Կոստանդ-
նուպաւլիս¹⁵ քսան¹⁶ մղոն է քաղաքն Երակ-
լեա[յ]¹⁷, յորում կա[յ] թէատրոնն, որ մի է յեւթն¹⁸

1 V Խ

2 S փոխանակաւ փխ փոխնկաւ (V. գրիչը նախ վրիպել է բառը, ապա լրացրել լուսանցքում՝ յորոց եւ մտին բառերի միջեւ ուղղման կայծակնաձեւ նշաններ դնելով)

3 V Սկանիո, S Սկանիոյ փխ Սկանդի[իոյ] (վեր. Երեմեանի՝ ըստ նախ. Բ.13՝ «Սկանդի»)

4 V կղզո փխ կղզույ (վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)

5 V Գերմանացոց փխ Գերմանացուց (վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)

6 Ըստ Երեմեանի՝ վերականգնելի է Դոււնայ

7 V յԱքիա փխ յԱքալիա (վեր. Սուքրեանի՝ փակագծերով՝ ըստ յաջորդի, տե՛ս նախ. Գ.67)

8 S չիք ի (V)

9 Ըստ Երեմեանի՝ վերականգնելի է նաեւ [Ուտի-կիսիկեանք]՝ Պոտղոմէոսից. բայց տե՛ս «Եւ այլք»

10 V ք

11 V ք

12 V մուսկոյս փխ մուսու կոյս (վեր. Սուքրեանի)

13 V Կոստնուպլիս

14 V Պոսպորոն փխ Պոսպորոն (վեր. Սուքրեանի. հմմտ. ստորել, նախ. Ե.4)

15 V Կոստնուպլե

16 V Խ

17 S Երակլեա փխ Երակլեալի (V)

18 V չէ, S չեթոն փխ չեթն (վեր., հմմտ. Ա.8, Բ.10, 16)

հրաշիցն, եւ ըստ հիւսիսոյ՝ ի Հոռոմ՝ երկու հա-
րիւր¹⁹ մղոն:

61 ²⁰ ԺԱ. Բնաշխարհ Մակեդոնիա է՝ յելից
կալով Յունական պեղագոսին²¹, առ երի Դաղմա-
տիոյ²² եւ Թրակա[յ]: 62 Ունի լերինս վեց²³, յորոց
մինն՝ Կիտառիոն, եւ միւսն՝ Ուրմբիս, գետք մեծա-
մեծք՝ վեց²⁴ եւ գաւառս՝ երեսուն²⁵, եւ զմեծն Թե-
սաղիա, յորմէ՝ Հայք: 63 Ունի մարմար կանաչ եւ
սպիտակախայտ²⁶: 64 Ունի ծոցս վեց²⁶, [կղ-
զիս երիս]²⁷: 65 Յերկայնն մասունս՝ եւթն²⁸, իսկ
ի լայն՝ հինգ²⁹:

66 ³⁰ ԺԲ. Բնաշխարհ՝ Ելլադա, առ երի կա-
լով Մակեդոնիոյ, [ի մէջ պեղագոսից]³¹: 67 Եւ
ունի փոքր աշխարհ[ւ]³² զԱքալիա³³. [զԱտտի-
կէ]³⁴. զ[Ելլադիոս]³⁵ (եւ յԱքալիա՝ Կորնթոս³⁶
քաղաք, եւ [Ատտիկէ]³⁷ ունի զԱթէնս, լերինք՝ Ե-

19 V ք (գուցէ, այս թիւը վերականգնելի է՝ վ (երեք հազար. տե՛ս ուշ երկաթագիր Վ → Մ)՝ ըստ «Միդո-նաչափք» բաժնի նախ. Զ.14-ի. տողի դիմաց V-ի գրիչը լուսանցքում մի ուղղազարդ է նկարել)

20 Ըստ Երեմեանի՝ այստեղ վերականգնելի է եւ-թավերնագիր. «Յաղագս Մակեդոնիոյ»

21 V պեղագոսին փխ պեղագոսին (վեր. Սուքրեանի)

22 V ք

23 V ք

24 V ք

25 V սպիտակախայտք փխ սպիտակախայտ (վեր. Սուքրեանի)

26 V ք

27 AE չորս, Dv² մի փխ երիս (Pv) / VS չիք կղզիս ե-րիս (վեր. Երեմեանի՝ ըստ համաձայնի)

28 V ք, S եթոն փխ եթն (վեր., հմմտ. Ա.8, Բ.10, 16)

29 V ք

30 Ըստ Երեմեանի՝ այստեղ վերականգնելի է եւ-թավերնագիր. «Յաղագս Ելլադայի»

31 DPv պեղագոսացն փխ պեղագոսից (AE) / VS չիք ի մէջ պեղագոսից (վեր.՝ ըստ համաձայնի)

32 VS աշխարհ փխ աշխարհիս (վեր.՝ ըստ համաձայնի (տե՛ս աշխարհս — զԱքալիա), ուր «աշխարհս վեց» է, բայց թիւը յստակ խմբագրիմ է)

33 Գրիչը նախ գրել է զԱքիա, ապա քի-ի վերելում յաւելել ա. հմմտ. նախ. Գ.56, 68, 69)

34 VS չիք զԱտտիկէ (վեր.՝ ըստ համաձայնի)

35 VS զՊիոնոմ, AE զԵպիոնիա, DPv զԵպիոնոս փխ զ[Ելլադիոս] (վեր., տե՛ս ուշ երկաթագիր Մ → Մ)

36 V Կորնթոս փխ Կորնթոս (վեր. Սուքրեանի)

37 VS չիք զԱտտիկէ (վեր. Երեմեանի՝ ըստ իմաստի)